ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

երկրորդ ընթերցում

Կ-386-04.10.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) դեբետային գումար՝ Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող հաշվանցման (պակասեցման) արդյունքում առաջացած՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում արտացոլված պետական բյուջեից փոխհատուցման ենթակա հարկի գումար կամ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ճշտված և նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված նախորդ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում ներառված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա հարկի գումարի դրական տարբերություն կամ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումար.»,

2) 8-րդ կետը «պարտավորությունների» բառերից հետո լրացնել «, բացառությամբ հարկային մարմնի կազմած ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների,» բառերով,

3) լրացնել 8.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

«8.1) վարչական ակտի միասնական հաշիվ՝ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների մարման նպատակով

գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ.»,

4) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10) միասնական հաշվի գումար՝ գումար, որով Օրենսգրքով սահմանված կարգով կարող են մարվել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, բացառությամբ հարկային մարմնի կազմած ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների, որը կարող է առաջանալ՝

ա. միասնական հաշվին կատարված վճարումից,

բ. հարկային հաշվարկների (այդ թվում՝ ճշտված) ներկայացման արդյունքում միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարներից,

գ. վարչական ակտի միասնական հաշվից միասնական հաշվին գումարների մուտքագրումից,

դ. հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկների հիման վրա հարկային մարմնի կողմից առաջադրված պարտավորությունների վերաբերյալ հարկային ծառայողի գործողության (անգործության) բողոքարկման մասով դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում՝ պարտավորության պակասեցումից կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի կամ սահմանված գործարքների մասով ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ավելացումից,

ե. միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված՝ միասնական հաշվին մուտքագրման ենթակա ավելացված արժեքի հարկի փոխհատուցվող գումարներից կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարներից.»,

5) լրացնել 10.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

«10.1) վարչական ակտի միասնական հաշվի գումար՝ գումար, որով Օրենսգրքով սահմանված կարգով կարող են մարվել հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտով առաջադրված պարտավորությունները, որը կարող է առաջանալ՝

ա. վարչական ակտի միասնական հաշվին կատարված վճարումից,

բ. միասնական հաշվից վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրումից,

գ. հարկային մարմնի ընդունած վարչական ակտի բողոքարկման մասով դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում՝ պարտավորության պակասեցումից կամ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ավելացումից,

դ. ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում՝ պարտավորության պակասեցումից կամ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ավելացումից.»:

Հոդված 2. *Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 63-րդ կետի «է» ենթակետում, 51-րդ հոդվածի 7-րդ մասում, 322-րդ հոդվածի 2-րդ մասում «միասնական հաշվի» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերը:*

Հոդված 3. Օրենսգրքի 18-րդ հոդվածում՝

1) լրացնել 2.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Հարկային մարմնի ստուգման կամ այլ վարչական ակտով առաջադրված՝ Օրենսգրքով սահմանված հարկի, տույժի և (կամ) տուգանքի վճարումը կատարվում է ստուգման կամ այլ վարչական ակտի անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:»,

2) 4-րդ մասում «միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը» բառերը փոխարինել «համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը, իսկ միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին վճարման մասով՝ այդ հաշիվներին համապատասխան գումարների մուտքագրման օրը» բառերով,

3) 5-րդ մասը «հաշվի» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերով, իսկ նույն մասի 1-ին կետը «հաշվին» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերով:

Հոդված 4. *Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում, 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 108-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 109-րդ հոդվածի*

4-րդ մասի 9-րդ, 112-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 147-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետերում «միասնական հաշվին» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասը «հարկ վճարողի պարտավորությունը» բառերից հետո լրացնել «, ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում սահմանված չափից ավելի արտացոլված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարները՝ ավել ցույց տրված գումարների չափով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 46-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հաշվի» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերը, իսկ «հաշվից» բառից հետո՝ «կամ վարչական ակտի միասնական հաշվից» բառերը,

2) 1-ին և 2-րդ մասերից հանել «դրա գծով» բառերը,

3) 2-րդ մասում «հաշվի միջոցով» բառերը փոխարինել «հաշվի կամ վարչական ակտի միասնական հաշվի միջոցով» բառերով և նույն մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը, 73-րդ հոդվածի 12-րդ մասը, 444-րդ հոդվածի 11-րդ մասը, 449-րդ հոդվածի 1-ին մասը, 456-րդ հոդվածի 8-րդ մասը:

Հոդված 8. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

1) 11-րդ մասի 1-ին կետում «գումարների» բառը փոխարինել «ավելացված արժեքի հարկի փոխհատուցվող գումարների» բառերով,

2) լրացնել 12-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«12. Ակցիզային հարկի մասով հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել նաև այն դեպքերում (ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ ներկայացվելու դեպքում՝ տվյալ հաշվարկը ակցիզային հարկի մասով հաշվի չի առնվում), եթե հարկային հաշվարկը վերաբերում է այն հաշվետու ժամանակաշրջանին, որը միասնական հաշվին մուտքագրման ենթակա ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների

հիմնավորվածության ուսումնասիրության նպատակով արդեն ուսումնասիրվել է հարկային մարմնի կողմից:»:

Հոդված 9. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասում «10-11-րդ մասերով» բառերը փոխարինել «10-12-րդ մասերով» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝

1) «ա» ենթակետում «համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ» բառերը փոխարինել «վերջին օրը ներառյալ» բառերով,

2) «բ» ենթակետում «մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ» բառերով,

3) «գ» ենթակետից հանել «, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 74-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվում է որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե

վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մարմանը կամ սույն հոդվածի 4-րդ կամ 5-րդ մասերին համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-5-րդ մասերով.

«3. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրվա դրությամբ հարկ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը կարող է ուղղվել որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մարմանը՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետի օրը կամ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգի կիրառմամբ:

4. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջանում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետի օրը: Եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման վերջնաժամկետից հետո ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, այդ թվում՝ ճշտված, առաջանում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:

5. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի

միասնական հաշվարկով առաջացած՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին:»:

Հոդված 12. Օրենսգրքի 75-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Հարկման հատուկ համակարգում գործող հարկ վճարողը մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ, եթե ԱԱՀ վճարող համարվելու հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները Օրենսգրքի 71-րդ հոդվածին համապատասխան ենթակա են հաշվանցման (պակասեցման) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կամ եթե ԱԱՀ վճարող համարվելու հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների Օրենսգրքով սահմանված կարգով ճշգրտման արդյունքները ենթակա են արտացոլման տվյալ հաշվետու ժամանակաշրջանում:»:

Հոդված 13. Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«1. ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները մուտքագրվում են միասնական հաշվին Օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում՝ նույն մասով սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում՝ Օրենսգրքի հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 14. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 4-րդ մասում «Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով համարվում է հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ» բառերը փոխարինել «, եթե այն հանգեցրել է հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը Օրենսգրքով

սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու, Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով՝ համարվում է որպես հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 95-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ակցիզային հարկի փոխհատուցվող գումարը սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվում է որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների մարմանը կամ սույն հոդվածի 4-րդ կամ 5-րդ *մասերին* համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին:

3. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրվա դրությամբ հարկ վճարողն ունի ակցիզային հարկի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը կարող է ուղղվել որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների մարմանը՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետի օրը կամ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգի կիրառմամբ:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջանում է ակցիզային հարկի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետին

նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետի օրը: Եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման վերջնաժամկետից հետո ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, այդ թվում՝ ճշտված, առաջանում է ակցիզային հարկի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:

5. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին:»:

Հոդված 16. Օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները մուտքագրվում են միասնական հաշվին Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում՝ նույն մասով սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում՝ Օրենսգրքի հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 17. Օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարը մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի վճարման

վերջնաժամկետի օրը, իսկ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի վճարման վերջնաժամկետից հետո տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող շահութահարկի հաշվարկով (այդ թվում՝ ճշտված) առաջացող պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարը մուտքագրվում է միասնական հաշվին շահութահարկի հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:»:

Հոդված 18. Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «այդ թվում՝ սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի բացասական տարբերությունը,» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով՝

«1.1. Սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի բացասական տարբերությունը՝ որպես պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումար, մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ռոյալթիի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ռոյալթիի վճարման վերջնաժամկետի օրը, իսկ տվյալ հարկային տարվա համար ռոյալթիի վճարման վերջնաժամկետից հետո տվյալ հարկային տարվա համար ներկայացվող ռոյալթիի հարկային հաշվարկով (այդ թվում՝ ճշտված) առաջացող՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումարը մուտքագրվում է միասնական հաշվին ռոյալթիի հարկային հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:»:

Հոդված 19. Օրենսգրքի 319-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «որպես դեբետային գումար (հարկային պարտավորությունից նվազեցվող գումար)» բառերը փոխարինել «որպես Օրենսգրքով սահմանված չափից ավել վճարված գումար (հարկային պարտավորությունից նվազեցվող գումար), որոնք ենթակա են մուտքագրման միասնական հաշվին» բառերով,

2) 3-րդ մասում «ճշտված հարկային հաշվարկով առաջացող դեբետային գումարը հաշվառվում է ժամանակագրական կարգով՝ ճշտված և նախորդ հարկային հաշվարկում» բառերը փոխարինել «ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի ճշտված միասնական հաշվարկով առաջացող դեբետային գումարը հաշվառվում է ժամանակագրական կարգով՝ ճշտված և նախորդ հաշվարկում» բառերով, իսկ նույն մասի 2-րդ նախադասությունում «պարտավորություն» բառից հետո լրացնել «կամ դեբետային գումարից նվազեցվող գումար» բառերը,

3) 4-րդ մասում «կանխավճարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճարի պարտավորությունները» բառերով,

4) 5-րդ մասում «, որոնք համարվում են դեբետային գումարներ), իսկ հարկային պարտավորության առաջացման դեպքում՝ սկզբնական հարկի վճարման վերջնաժամկետից սկսած՝ հաշվարկվում են տույժեր» բառերը փոխարինել «, որոնք մուտքագրվում են միասնական հաշիվ Օրենսգրքի 74-րդ կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածներին համապատասխան), իսկ հարկային պարտավորության առաջացման դեպքում՝ հաշվարկվում են տույժեր Օրենսգրքի 401-րդ հոդվածին համապատասխան» բառերով,

5) լրացնել 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«6. Հարկային պարտավորությունների հաշվառման, դրանց մարման վերաբերյալ հարկային մարմինը յուրաքանչյուր հարկ վճարողի մասով վարում է անձնական հաշվի քարտ՝ էլեկտրոնային եղանակով: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է հարկային մարմինը: Անձնական հաշվի քարտը վարվում է առանձին-առանձին՝

1) ըստ հարկ վճարողների կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների,

2) ըստ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերում արտացոլված տվյալների:»:

Հոդված 20. Օրենսգրքի 320-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հարկային մարմնի կողմից հարկ վճարողի մոտ իրականացված ստուգման (ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքներով

առաջադրված՝ պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի հարկային պարտավորությունները և դեբետային գումարները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտում հաշվառվում են Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով՝ ստուգման կամ այլ վարչական ակտը (ուսումնասիրության արձանագրությունը, վարչական ակտը) անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող օրը:»:

Հոդված 21. Օրենսգրքի 321-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Վերստուգման և նախորդ ստուգման (կամ վերստուգման) արդյունքների գումարային տարբերությունները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտում հաշվառվում են վերստուգման ակտը Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող օրը՝ Օրենսգրքի 320-րդ հոդվածի համաձայն (անկախ խախտման տեսակների փոփոխությունը հաշվի առնելու):»,

2) 3-րդ մասում «անձնական հաշվի քարտերում (հատուկ անձնական հաշվի քարտերում)» բառերը փոխարինել «Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտում» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 325-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «օրը» բառից հետո լրացնել «, իսկ վարչական ակտի միասնական հաշվին վճարված գումարների հաշվառման օր՝ դրանց՝ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման օրը» բառերով,

2) 2-րդ մասում «հաշվին» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերով.

3) 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Հարկային պարտավորությունները մարվում են միասնական հաշվում առկա գումարների հաշվին, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Միասնական հաշվի միջոցով մարվում են այն հարկի կամ վճարի գծով հարկային պարտավորությունները, որոնց մասով Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացվում հարկային հաշվարկ, այդ հարկի կամ վճարի գծով կանխավճարները,

հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տույժերի, տուգանքների գումարները՝ բացառությամբ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկի կամ վճարի, տույժերի, տուգանքների գծով գումարների:

4. ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի պարտավորությունները նախ մարվում են համապատասխանաբար՝ տվյալ հարկատեսակի գծով անձնական հաշվի քարտում առկա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հաշվին Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասին և Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, ապա՝ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միասնական հաշվում առկա գումարի հաշվին:»,

4) լրացնել 4.1-ին և 4.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«4.1. Միասնական հաշվում առկա գումարները՝ մինչև տվյալ հարկի գծով պարտավորությունների կատարման վերջնաժամկետին նախորդող օրը ներառյալ, հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգի կիրառմամբ կարող են ուղղվել հարկ վճարողի կողմից նշված հարկային պարտավորությունների մարմանը:

4.2. Հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգը չկիրառելու դեպքում հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետի օրը միասնական հաշվում առկա գումարներից մարումներն իրականացվում են ինքնաշխատ եղանակով:»,

5) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ, «Միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են սոցիալական վճարի հարկային պարտավորությունները:»:

6) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո միասական հաշվում առկա գումարների հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ մարման օրվա դրությամբ առկա և ավելի վաղ վճարման վերջնաժամկետ ունեցող հարկային պարտավորության հերթականության, իսկ մարման օրվա դրությամբ վճարման վերջնաժամկետները համընկնելու (ժամկետները նույնն են) դեպքում՝ հարկային

պարտավորությունները մարվում են Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված անձնական հաշվի քարտի վարման կարգին համապատասխան, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքի: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների գումարները:»,

7) լրացնել 6.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«6.1. Վարչական ակտի միասնական հաշվի միջոցով մարվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկի կամ վճարի գծով պարտավորությունները, այդ թվում՝ տույժերի, տուգանքների գծով, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված տուգանքների, վնասի հատուցման գումարների գծով պարտավորությունները: Վարչական ակտի միասական հաշվում առկա գումարներից առաջնահերթ մարվում են սոցիալական վճարի հարկային պարտավորությունները, այնուհետ վարչական ակտի միասական հաշվում առկա գումարների հաշվին հարկ վճարողի հարկային պարտավորությունները մարվում են ըստ մարման օրվա դրությամբ առկա և ավելի վաղ վճարման վերջնաժամկետ ունեցող հարկային պարտավորության հերթականության, իսկ մարման օրվա դրությամբ վճարման վերջնաժամկետները համընկնելու (ժամկետները նույնն են) դեպքում՝ հարկային պարտավորությունները մարվում են Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված անձնական հաշվի քարտի վարման կարգին համապատասխան: Ընդ որում, հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները:»:

8) 8-րդ մասում «Միասնական հաշվին» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 326-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 326. Միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման օրը**

1. Միասնական հաշվին գումարների մուտքագրման օր է համարվում՝

1) միասնական հաշվին վճարում կատարելու արդյունքում միասնական հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը.

2) ճշտված հարկային հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացած գումարների մասով՝ ճշտված հարկային հաշվարկի ներկայացման ամսաթիվը.

3) Օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ կամ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը.

4) Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դեպքերում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը.

5) Օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարի միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը,

6) Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքերում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումարի միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը,

7) վարչական ակտի միասնական հաշվից միասնական հաշվին գումարները մուտքագրելու ամսաթիվը.

8) դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում հարկային պարտավորության պակասեցումից կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից առաջացած գումարների մասով՝ դատարանի վճռի կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման ընդունման ամսաթիվը:

2. Վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման օր է համարվում՝

1) վարչական ակտի միասնական հաշվին վճարում կատարելու արդյունքում վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը.

2) միասնական հաշվից վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը.

3) համալիր հարկային ստուգման (վերստուգման) կամ ուսումնասիրության արդյունքներով հարկային պարտավորության պակասեցումից կամ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից առաջացած

գումարների մասով՝ համալիր հարկային ստուգման ակտը կամ ուսումնասիրության արձանագրությունը անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող օրը:»:

Հոդված 24. Օրենսգրքի 327-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 327. Միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրումը, միասնական հաշվից կամ վարչական ակտի միասնական հաշվից գումարների վերադարձը**

1. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված համարված գումարները ենթակա են մուտքագրման միասնական հաշվին՝ հարկային մարմնի սահմանած ձևի եզրակացության հիման վրա՝ ուսումնասիրության արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Միասնական հաշվում կամ վարչական ակտի միասնական հաշվում առկա գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողին նրա կողմից հարկային մարմին ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած ձևով և կարգով լրացված դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում, իսկ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում՝ դիմումը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում: Վերադարձը կատարվում է դիմումում նշված գումարի չափով: Միասնական հաշվից կամ վարչական ակտի միասնական հաշվից գումարների վերադարձն իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով հարկ վճարողի բանկային հաշվին (*իսկ Կառավարության սահմանած դեպքերում՝ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացված այլ հաշվին*) կամ վարչական ակտի միասնական հաշվին կամ միասնական հաշվին: Վճարողի բանկային հաշվին (*իսկ Կառավարության սահմանած դեպքերում՝ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացված այլ հաշվին*) գումարի վերադարձը սույն մասով սահմանված ժամկետից 30 օրից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար հարկ վճարողին վճարվում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0.03 տոկոսի չափով:»:

Հոդված 25. Օրենսգրքի 348-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հիմնավորվածությունն ուսումնասիրելու և միասնական հաշվին մուտքագրելու նպատակով հարկային մարմինը հարկ վճարողի դիմումի հիման վրա իրականացնում է միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն (այսուհետ սույն հոդվածում՝ ուսումնասիրություն): Սույն մասով սահմանված դիմումի ձևը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»,

2) ուժը կորցրած ճանաչել 6-8-րդ, 10-րդ մասերը:

Հոդված 26. Օրենսգրքի 401-րդ հոդվածի *3-րդ մասից հանել «այն դեպքերում, երբ» բառերը և նույն մասը* լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ճշտման արդյունքում՝ ճշտված և նախորդ հաշվարկում ներառված տվյալներով առաջացող դեբետային գումարի բացասական տարբերության չափով՝ որպես հարկային պարտավորություն հաշվառվող գումարների նկատմամբ.

ա. տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքով սահմանված պարտավորությունների մարմանը մասնակցելու օրվանից սկսած, եթե այդ գումարներն Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվել են ԱԱՀ-ի պարտավորությունների մարմանը կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվել են ակցիզային հարկի պարտավորությունների մարմանը,

բ. միասնական հաշվին մուտքագրման օրվանից սկսած, եթե այդ գումարներն Օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ մասին կամ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասին կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասին կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան մուտքագրվել են միասնական հաշվին:»:

Հոդված 27. Օրենսգրքի 457-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Մինչև 2024 թվականի *հուլիսի* 1-ը հաշվառված և չկատարված (չմարված) հարկային պարտավորությունները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի

համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտերում հաշվառվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»,

2) լրացնել 8-10-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«8. Մինչև 2024 թվականի *հուլիսի* 1-ը ստուգման կամ այլ վարչական ակտով հաշվառված և չկատարված (չմարված) հարկային պարտավորությունները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտերում հաշվառվում են հարկային մարմնի սահմանած կարգով:

9. *2024 թվականի հունիսի 30-ի* դրությամբ առկա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները հաշվառվում են որպես ռիսկային փոխհատուցվող գումարներ: ԱԱՀ-ի մասով այդ փոխհատուցվող գումարները կարող են ուղղվել ԱԱՀ-ի գծով պարտավորությունների մարմանը՝ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան կամ մուտքագրվել միասնական հաշվին Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան, իսկ ակցիզային հարկի մասով այդ փոխհատուցվող գումարները կարող են ուղղվել ակցիզային հարկի գծով պարտավորությունների մարմանը՝ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան կամ մուտքագրվել միասնական հաշվին Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան:

10. 2024 թվականի *հուլիսի* 1-ից հետո հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված)՝ արտացոլված կամ հարկային մարմնի ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունները՝ անկախ որ հաշվետու ժամանակաշրջանին են վերաբերվում, հաշվառվում են Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտերում՝ հարկային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված 28. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի *հուլիսի* 1-ից: Սույն օրենքի *11*-րդ հոդվածի 2-րդ, *15*-րդ հոդվածի 2-րդ և *19*-րդ հոդվածի 5-րդ կետերով, *24*-րդ հոդվածով, *25*-րդ հոդվածի 1-ին կետով և *27*-րդ հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական *նորմատիվ իրավական* ակտերը սահմանվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-386-04.10.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) դեբետային գումար՝ Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող հաշվանցման (պակասեցման) արդյունքում առաջացած՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում արտացոլված պետական բյուջեից փոխհատուցման ենթակա հարկի գումար կամ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ճշտված և նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված նախորդ ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում ներառված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա հարկի գումարի դրական տարբերություն կամ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումար.»,

2) 8-րդ կետը «պարտավորությունների» բառերից հետո լրացնել «, բացառությամբ հարկային մարմնի կազմած ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների,» բառերով,

3) լրացնել 8.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

«8.1) վարչական ակտի միասնական հաշիվ՝ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ.»,

4) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10) միասնական հաշվի գումար՝ գումար, որով Օրենսգրքով սահմանված կարգով կարող են մարվել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, բացառությամբ հարկային մարմնի կազմած ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների, որը կարող է առաջանալ՝

ա. միասնական հաշվին կատարված վճարումից,

բ. հարկային հաշվարկների (այդ թվում՝ ճշտված) ներկայացման արդյունքում միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարներից,

գ. վարչական ակտի միասնական հաշվից միասնական հաշվին գումարների մուտքագրումից,

դ. հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկների հիման վրա հարկային մարմնի կողմից առաջադրված պարտավորությունների վերաբերյալ հարկային ծառայողի գործողության (անգործության) բողոքարկման մասով դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում՝ պարտավորության պակասեցումից կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի կամ ~~Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով~~ սահմանված գործարքների մասով ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ավելացումից,

ե. միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված՝ միասնական հաշվին մուտքագրման ենթակա ավելացված արժեքի հարկի փոխհատուցվող գումարներից կամ ~~Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների մասով~~ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարներից.»,

5) լրացնել 10.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

«10.1) վարչական ակտի միասնական հաշվի գումար՝ գումար, որով Օրենսգրքով սահմանված կարգով կարող են մարվել հարկային մարմնի կողմից Օրենսգրքով

սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտով առաջադրված պարտավորությունները, որը կարող է առաջանալ՝

ա. վարչական ակտի միասնական հաշվին կատարված վճարումից,

բ. միասնական հաշվից վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրումից,

գ. հարկային մարմնի ընդունած վարչական ակտի բողոքարկման մասով դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում՝ պարտավորության պակասեցումից կամ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի կամ ~~Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների մասով~~ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ավելացումից,

դ. ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում՝ պարտավորության պակասեցումից կամ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ավելացված արժեքի հարկի կամ ~~Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների մասով~~ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների ավելացումից.»:

Հոդված 2. Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 63-րդ կետի «է» ենթակետում, 51-րդ հոդվածի 7-րդ մասում, 322-րդ հոդվածի 2-րդ մասում «միասնական հաշվի» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերը:

Հոդված 3~~2~~. Օրենսգրքի 18-րդ հոդվածում՝

1) լրացնել 2.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Հարկային մարմնի ստուգման կամ այլ վարչական ակտով առաջադրված՝ Օրենսգրքով սահմանված հարկի, տույժի և (կամ) տուգանքի վճարումը կատարվում է ստուգման կամ այլ վարչական ակտի անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:»,

~~2) 4-րդ մասում «միասնական գանձապետական հաշվին» բառերը փոխարինել «համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին» բառերով,~~

2) 4-րդ մասում «միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը» բառերը փոխարինել «համապատասխան հարկի գծով պարտավորությունը

հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը, իսկ միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին վճարման մասով՝ այդ հաշիվներին համապատասխան գումարների մուտքագրման օրը» բառերով,

3) 5-րդ մասը «հաշվի» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերով, իսկ նույն մասի 1-ին կետը «հաշվին» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում, 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 108-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 109-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետում, 112-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 147-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետերում «միասնական հաշվին» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերը:

Հոդված 53. Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասը «հարկ վճարողի պարտավորությունը» բառերից հետո լրացնել «, ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում սահմանված չափից ավելի արտացոլված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարները՝ ավել ցույց տրված գումարների չափով» բառերով:

Հոդված 64. Օրենսգրքի 46-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հաշվի» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերը, իսկ «հաշվից» բառից հետո՝ «կամ վարչական ակտի միասնական հաշվից» բառերը,

2) 1-ին և 2-րդ մասերից հանել «դրա գծով» բառերը,

3) 2-րդ մասում «հաշվի միջոցով» բառերը փոխարինել «հաշվի կամ վարչական ակտի միասնական հաշվի միջոցով» բառերով և նույն մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 75. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը, 73-րդ հոդվածի 12-րդ մասը, 444-րդ հոդվածի 11-րդ մասը, 449-րդ հոդվածի 1-ին մասը, 456-րդ հոդվածի 8-րդ մասը:

Հոդված 86. Օրենսգրքի 53-րդ հոդվածում՝

1) 11-րդ մասի 1-ին կետում «գումարների» բառը փոխարինել «ավելացված արժեքի հարկի փոխհատուցվող գումարների» բառերով,

2) լրացնել 12-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«12. Ակցիզային հարկի մասով հարկային հաշվարկներ չեն կարող ներկայացվել նաև այն դեպքերում (ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ ներկայացվելու դեպքում՝ տվյալ հաշվարկը ակցիզային հարկի մասով հաշվի չի առնվում), եթե հարկային հաշվարկը վերաբերում է այն հաշվետու ժամանակաշրջանին, որը միասնական հաշվին մուտքագրման ենթակա ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հիմնավորվածության ուսումնասիրության նպատակով արդեն ուսումնասիրվել է հարկային մարմնի կողմից:»:

Հոդված 9~~7~~. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասում «10-11-րդ մասերով» բառերը փոխարինել «10-12-րդ մասերով» բառերով:

Հոդված 10~~8~~. Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝

1) «ա» ենթակետում «համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ» բառերը փոխարինել «վերջին օրը ներառյալ» բառերով,

2) «բ» ենթակետում «մինչև ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ» բառերը փոխարինել «մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ» բառերով,

3) «գ» ենթակետից հանել «, եթե սույն ենթակետով այլ բան սահմանված չէ: ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիրը մինչև հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման համար Օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերջնաժամկետի օրը ներառյալ ներկայացնելու և մինչև այդ օրը ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները վճարված լինելու դեպքում ներմուծման ճշտված հարկային հայտարարագրով արտացոլված ԱԱՀ-ի լրացուցիչ գումարները հաշվանցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով» բառերը:

Հոդված 119. Օրենսգրքի 74-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվում է որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մարմանը կամ սույն հոդվածի 4-րդ կամ 5-րդ մասերին համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-5-րդ մասերով.

«3. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրվա դրությամբ հարկ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը կարող է ուղղվել որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների մարմանը՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետի օրը կամ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգի կիրառմամբ:

4. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջանում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետի օրը: Եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման վերջնաժամկետից հետո ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, այդ թվում՝

ճշտված, առաջանում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:

5. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին:»:

Հոդված 12~~10~~. Օրենսգրքի 75-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Հարկման հատուկ համակարգում գործող հարկ վճարողը մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ, եթե ԱԱՀ վճարող համարվելու հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները Օրենսգրքի 71-րդ հոդվածին համապատասխան ենթակա են հաշվանցման (պակասեցման) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կամ եթե ԱԱՀ վճարող համարվելու հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների Օրենսգրքով սահմանված կարգով ճշգրտման արդյունքները ենթակա են արտացոլման տվյալ հաշվետու ժամանակաշրջանում:»:

Հոդված 13~~11~~. Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«1. ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները մուտքագրվում են միասնական հաշվին Օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում՝ նույն մասով սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասով

սահմանված դեպքերում՝ Օրենսգրքի հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 14~~12~~. Օրենսգրքի 94-րդ հոդվածի 4-րդ մասում «Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով համարվում է հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ» բառերը փոխարինել «, եթե այն հանգեցրել է հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու, Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով՝ համարվում է որպես հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ» բառերով:

Հոդված 15~~13~~. Օրենսգրքի 95-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. ~~Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների իրականացման դեպքում հ~~Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ակցիզային հարկի փոխհատուցվող գումարը սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվում է որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների մարմանը կամ սույն հոդվածի ~~4-րդ մասին համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին կամ սույն հոդվածի 5-րդ մասին~~ 4-րդ կամ 5-րդ մասերին համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին:

3. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրվա դրությամբ հարկ վճարողն ունի ակցիզային հարկի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը կարող է ուղղվել որևէ հաշվետու ժամանակաշրջանների գործունության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացած՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների մարմանը՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետի օրը կամ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման

վերջնաժամկետին նախորդող օրը՝ հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգի կիրառմամբ:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Եթե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջանում է ակցիզային հարկի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետի օրը: Եթե որևէ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման վերջնաժամկետից հետո ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով, այդ թվում՝ ճշտված, առաջանում է ակցիզային հարկի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին միասնական հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:

5. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին:»:

Հոդված 16~~14~~. Օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները մուտքագրվում են միասնական հաշվին Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում՝ նույն մասով սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով

սահմանված դեպքերում՝ Օրենսգրքի հարկային վարչարարության մասով սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 17~~15~~. Օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանված՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարը մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի վճարման վերջնաժամկետի օրը, իսկ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար շահութահարկի վճարման վերջնաժամկետից հետո տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող շահութահարկի հաշվարկով (այդ թվում՝ ճշտված) առաջացող պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարը մուտքագրվում է միասնական հաշվին շահութահարկի հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:»:

Հոդված 18~~16~~. Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «այդ թվում՝ սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի բացասական տարբերությունը,» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով՝

«1.1. Սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ռոյալթիի գումարի և հարկային տարվա ընթացքում վճարված ռոյալթիի կանխավճարների հանրագումարի բացասական տարբերությունը՝ որպես պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումար, մուտքագրվում է միասնական հաշվին՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ռոյալթիի վճարման վերջնաժամկետին նախորդող օրը՝ եթե հարկ վճարողի կողմից կիրառվել է համապատասխան ծրագրային հրահանգ, կամ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ռոյալթիի վճարման վերջնաժամկետի օրը, իսկ տվյալ հարկային տարվա համար ռոյալթիի վճարման վերջնաժամկետից հետո տվյալ հարկային տարվա համար

ներկայացվող ռոյալթիի հարկային հաշվարկով (այդ թվում՝ ճշտված) առաջացող՝ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումարը մուտքագրվում է միասնական հաշվին ռոյալթիի հարկային հաշվարկի, այդ թվում՝ ճշտված, ներկայացման օրը:»:

Հոդված 19~~17~~. Օրենսգրքի 319-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «որպես դեբետային գումար (հարկային պարտավորությունից նվազեցվող գումար)» բառերը փոխարինել «որպես Օրենսգրքով սահմանված չափից ավել վճարված գումար (հարկային պարտավորությունից նվազեցվող գումար), որոնք ենթակա են մուտքագրման միասնական հաշվին» բառերով,

2) 3-րդ մասում «ճշտված հարկային հաշվարկով առաջացող դեբետային գումարը հաշվառվում է ժամանակագրական կարգով՝ ճշտված և նախորդ հարկային հաշվարկում» բառերը փոխարինել «ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի ճշտված միասնական հաշվարկով առաջացող դեբետային գումարը հաշվառվում է ժամանակագրական կարգով՝ ճշտված և նախորդ հաշվարկում» բառերով, իսկ նույն մասի 2-րդ նախադասությունում «պարտավորություն» բառից հետո լրացնել «կամ դեբետային գումարից նվազեցվող գումար» բառերը,

3) 4-րդ մասում «կանխավճարները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հանրային ծառայության կարգավորման պարտադիր վճարի պարտավորությունները» բառերով,

4) 5-րդ մասում «, որոնք համարվում են դեբետային գումարներ), իսկ հարկային պարտավորության առաջացման դեպքում՝ սկզբնական հարկի վճարման վերջնաժամկետից սկսած՝ հաշվարկվում են տույժեր» բառերը փոխարինել «, որոնք մուտքագրվում են միասնական հաշիվ Օրենսգրքի 74-րդ կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածներին համապատասխան), իսկ հարկային պարտավորության առաջացման դեպքում՝ հաշվարկվում են տույժեր Օրենսգրքի 401-րդ հոդվածին համապատասխան» բառերով,

5) լրացնել 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«6. Հարկային պարտավորությունների հաշվառման, դրանց մարման վերաբերյալ հարկային մարմինը յուրաքանչյուր հարկ վճարողի մասով վարում է անձնական հաշվի քարտ՝ էլեկտրոնային եղանակով: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը

սահմանում է հարկային մարմինը: Անձնական հաշվի քարտը վարվում է առանձին-առանձին՝

1) ըստ հարկ վճարողների կողմից ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների,

2) ըստ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերում արտացոլված տվյալների:»:

Հոդված 20~~18~~. Օրենսգրքի 320-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հարկային մարմնի կողմից հարկ վճարողի մոտ իրականացված ստուգման (ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքներով առաջադրված՝ պետական բյուջեի նկատմամբ հարկ վճարողի հարկային պարտավորությունները և դեբետային գումարները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտում հաշվառվում են Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով՝ ստուգման կամ այլ վարչական ակտը (ուսումնասիրության արձանագրությունը, վարչական ակտը) անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող օրը:»:

Հոդված 21~~19~~. Օրենսգրքի 321-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Վերստուգման և նախորդ ստուգման (կամ վերստուգման) արդյունքների գումարային տարբերությունները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտում հաշվառվում են վերստուգման ակտը Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող օրը՝ Օրենսգրքի 320-րդ հոդվածի համաձայն (անկախ խախտման տեսակների փոփոխությունը հաշվի առնելու):»,

2) 3-րդ մասում «անձնական հաշվի քարտերում (հատուկ անձնական հաշվի քարտերում)» բառերը փոխարինել «Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտում» բառերով:

Հոդված 22~~20~~. Օրենսգրքի 325-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «օրը» բառից հետո լրացնել «, իսկ վարչական ակտի միասնական հաշվին վճարված գումարների հաշվառման օր՝ դրանց՝ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման օրը» բառերով,

2) 2-րդ մասում «հաշվին» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերով.

3) 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Հարկային պարտավորությունները մարվում են միասնական հաշվում առկա գումարների հաշվին, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Միասնական հաշվի միջոցով մարվում են այն հարկի կամ վճարի գծով հարկային պարտավորությունները, որոնց մասով Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացվում հարկային հաշվարկ, այդ հարկի կամ վճարի գծով կանխավճարները, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը, ինչպես նաև դրանց գծով հաշվարկված տույժերի, տուգանքների գումարները՝ բացառությամբ հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկի կամ վճարի, տույժերի, տուգանքների գծով գումարների:

4. ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի պարտավորությունները նախ մարվում են համապատասխանաբար՝ տվյալ հարկատեսակի գծով անձնական հաշվի քարտում առկա ԱԱՀ-ի կամ ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հաշվին Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասին և Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, ապա՝ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միասնական հաշվում առկա գումարի հաշվին:»,

4) լրացնել 4.1-ին և 4.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«4.1. Միասնական հաշվում առկա գումարները՝ մինչև տվյալ հարկի գծով պարտավորությունների կատարման վերջնաժամկետին նախորդող օրը ներառյալ, հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգի կիրառմամբ կարող են ուղղվել հարկ վճարողի կողմից նշված հարկային պարտավորությունների մարմանը:

4.2. Հարկ վճարողի կողմից համապատասխան ծրագրային հրահանգը չկիրառելու դեպքում հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետի օրը

միասնական հաշվում առկա գումարներից մարումներն իրականացվում են ինքնաշխատ եղանակով:»,

5) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ, «Միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են սոցիալական վճարի հարկային պարտավորությունները:»:

6) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո միասական հաշվում առկա գումարների հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ մարման օրվա դրությամբ առկա և ավելի վաղ վճարման վերջնաժամկետ ունեցող հարկային պարտավորության հերթականության, իսկ մարման օրվա դրությամբ վճարման վերջնաժամկետները համընկնելու (ժամկետները նույնն են) դեպքում՝ հարկային պարտավորությունները մարվում են Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված անձնական հաշվի քարտի վարման կարգին համապատասխան, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքի: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների գումարները:»,

7) լրացնել 6.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«6.1. Վարչական ակտի միասնական հաշվի միջոցով մարվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկի կամ վճարի գծով պարտավորությունները, այդ թվում՝ տույժերի, տուգանքների գծով, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված տուգանքների, վնասի հատուցման գումարների գծով պարտավորությունները: Վարչական ակտի միասական հաշվում առկա գումարներից առաջնահերթ մարվում են սոցիալական վճարի հարկային պարտավորությունները, այնուհետ վարչական ակտի միասական հաշվում առկա գումարների հաշվին հարկ վճարողի հարկային պարտավորությունները մարվում են ըստ մարման օրվա դրությամբ առկա և ավելի վաղ վճարման վերջնաժամկետ ունեցող հարկային պարտավորության հերթականության, իսկ մարման օրվա դրությամբ վճարման վերջնաժամկետները համընկնելու (ժամկետները նույնն են) դեպքում՝ հարկային պարտավորությունները մարվում են Օրենսգրքի 319-րդ

հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված անձնական հաշվի քարտի վարման կարգին համապատասխան: Ընդ որում, հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները:»:

8) 8-րդ մասում «Միասնական հաշվին» բառից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերով:

Հոդված 232~~1~~. Օրենսգրքի 326-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 326. Միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման օրը**

1. Միասնական հաշվին գումարների մուտքագրման օր է համարվում՝

1) միասնական հաշվին վճարում կատարելու արդյունքում միասնական հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը.

2) ճշտված հարկային հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացած գումարների մասով՝ ճշտված հարկային հաշվարկի ներկայացման ամսաթիվը.

3) Օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ կամ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դեպքերում ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը.

4) Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասերով սահմանված դեպքերում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը.

5) Օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարի միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը,

6) Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքերում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումարի միասնական հաշվին մուտքագրելու ամսաթիվը,

7) վարչական ակտի միասնական հաշվից միասնական հաշվին գումարները մուտքագրելու ամսաթիվը.

8) դատարանի վճռի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում հարկային պարտավորության պակասեցումից կամ միասնական

հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից առաջացած գումարների մասով՝ դատարանի վճռի կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման ընդունման ամսաթիվը:

2. Վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման օր է համարվում՝

1) վարչական ակտի միասնական հաշվին վճարում կատարելու արդյունքում վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը.

2) միասնական հաշվից վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրման ամսաթիվը.

3) համալիր հարկային ստուգման (վերստուգման) կամ ուսումնասիրության արդյունքներով հարկային պարտավորության պակասեցումից կամ վարչական ակտի միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների ավելացումից առաջացած գումարների մասով՝ համալիր հարկային ստուգման ակտը կամ ուսումնասիրության արձանագրությունը անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող օրը:»:

Հոդված 24~~22~~. Օրենսգրքի 327-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 327. Միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին գումարների մուտքագրումը, միասնական հաշվից կամ վարչական ակտի միասնական հաշվից գումարների վերադարձը**

1. Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված համարված գումարները ենթակա են մուտքագրման միասնական հաշվին՝ հարկային մարմնի սահմանած ձևի եզրակացության հիման վրա՝ ուսումնասիրության արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. Միասնական հաշվում կամ վարչական ակտի միասնական հաշվում առկա գումարները ենթակա են վերադարձման հարկ վճարողին նրա կողմից հարկային մարմին ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած ձևով և կարգով լրացված դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում, իսկ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում՝ դիմումը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում: Վերադարձը կատարվում է դիմումում նշված գումարի չափով: Միասնական հաշվից կամ վարչական ակտի միասնական հաշվից գումարների

վերադարձն իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով հարկ վճարողի բանկային հաշվին (~~իսկ դրա բացակայության դեպքում՝ հարկ վճարողի առաջարկած առևտրային բանկ՝ ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով~~ իսկ Կառավարության սահմանած դեպքերում՝ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացված այլ հաշվին) կամ վարչական ակտի միասնական հաշվին կամ միասնական հաշվին: Վճարողի բանկային հաշվին (~~իսկ դրա բացակայության դեպքում՝ վճարողի առաջարկած առևտրային բանկ՝ ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով~~ *իսկ Կառավարության սահմանած դեպքերում՝ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացված այլ հաշվին*) գումարի վերադարձը սույն մասով սահմանված ժամկետից 30 օրից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար հարկ վճարողին վճարվում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0.03 տոկոսի չափով:»:

Հոդված 25~~23~~. Օրենսգրքի 348-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած՝ Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային համարվող ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարների հիմնավորվածությունն ուսումնասիրելու և միասնական հաշվին մուտքագրելու նպատակով հարկային մարմինը հարկ վճարողի դիմումի հիման վրա իրականացնում է միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն (այսուհետ սույն հոդվածում՝ ուսումնասիրություն): Սույն մասով սահմանված դիմումի ձևը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:»,

2) ուժը կորցրած ճանաչել 6-8-րդ, 10-րդ մասերը:

Հոդված 26~~24~~. Օրենսգրքի 401-րդ հոդվածի ~~3-րդ մասը~~ 3-րդ մասից հանել «այն դեպքերում, երբ» բառերը և նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ճշտման արդյունքում՝ ճշտված և նախորդ հաշվարկում ներառված տվյալներով առաջացող դեբետային գումարի բացասական

տարբերության չափով՝ որպես հարկային պարտավորություն հաշվառվող գումարների նկատմամբ.

ա. տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար Օրենսգրքով սահմանված պարտավորությունների մարմանը մասնակցելու օրվանից սկսած, եթե այդ գումարներն Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվել են ԱԱՀ-ի պարտավորությունների մարմանը կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան ուղղվել են ակցիզային հարկի պարտավորությունների մարմանը,

բ. միասնական հաշվին մուտքագրման օրվանից սկսած, եթե այդ գումարներն Օրենսգրքի 74-րդ հոդվածի 4-րդ մասին կամ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասին կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասին կամ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան մուտքագրվել են միասնական հաշվին:»:

Հոդված 27~~25~~. Օրենսգրքի 457-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Մինչև 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ը հաշվառված և չկատարված (չմարված) հարկային պարտավորությունները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտերում հաշվառվում են հարկային մարմնի սահմանած կարգով:»,

2) լրացնել 8-10-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«8. Մինչև 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ը ստուգման կամ այլ վարչական ակտով հաշվառված և չկատարված (չմարված) հարկային պարտավորությունները Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտերում հաշվառվում են հարկային մարմնի սահմանած կարգով:

9. ~~2023 թվականի դեկտեմբերի 31-ի~~ 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները հաշվառվում են որպես ռիսկային փոխհատուցվող գումարներ: ԱԱՀ-ի մասով այդ փոխհատուցվող գումարները կարող են ուղղվել ԱԱՀ-ի գծով պարտավորությունների մարմանը՝ Օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան կամ մուտքագրվել միասնական հաշվին Օրենսգրքի 74-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան, իսկ ակցիզային հարկի մասով այդ փոխհատուցվող գումարները կարող են ուղղվել ակցիզային հարկի գծով

պարտավորությունների մարմանը՝ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան կամ մուտքագրվել միասնական հաշվին Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան:

10. 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից հետո հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված)՝ արտացոլված կամ հարկային մարմնի ստուգման կամ այլ վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունները՝ անկախ որ հաշվետու ժամանակաշրջանին են վերաբերվում, հաշվառվում են Օրենսգրքի 319-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հարկային մարմնի կողմից վարվող անձնական հաշվի քարտերում՝ հարկային մարմնի սահմանած կարգով:»:

Հոդված 28~~26~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից: Սույն օրենքի ~~9~~11-րդ հոդվածի 2-րդ, ~~13~~15-րդ հոդվածի 2-րդ և ~~17~~19-րդ հոդվածի ~~4~~5-րդ կետերով, ~~22~~24-րդ հոդվածով, ~~23~~25-րդ հոդվածի 1-ին կետով և ~~25~~27-րդ հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սահմանվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-386-04.10.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1, կետ 3**	Առաջարկվում է հստակեցնել, որ օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 8.1-ին կետով սահմանվող վարչական ակտի միասնական հաշիվը ևս վարվում է գանձապետարանի կողմից: Ըստ այդմ նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետում «մարման նպատակով» բառերից հետո լրացվել են «գանձապետարանի կողմից վարվող» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1, կետ 4 (լրացվող 10 կետի «դ», «ե» ենթակետեր), կետ 5 (լրացվող 10.1 կետի «գ», «դ» ենթակետեր), հոդված 13 (լրամշակված նախագծի հոդված 15) կետ 1**	Հստակեցման առումով առաջարկվում է նախագծի նշված հոդվածներից հանել Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերին կատարվող հղումները, հաշվի առնելով, որ նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերում են օրենսգրքի 95-րդ հոդվածով սահմանված ակցիզային հարկի փոխհատուցվող բոլոր գումարներին: Ըստ այդմ նախագծի 1-ին հ**ոդվածի 4-րդ**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			(լրացվող 10 կետի «դ», «ե» ենթակետեր), 5-րդ (լրացվող 10.1 կետի «գ», «դ» ենթակետեր) կետերից և 13-րդ հոդվածի (լրամշակված նախագծի հոդված 15) 1-ին կետից հանվել են «Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով» բառերը:		
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 2 (լրամշակված նախագծի հոդված 3), կետ 2**	Առաջարկվում է հստակեցնել նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետը, հաշվի առնելով, որ հարկ վճարողի կողմից հարկի գումարները վճարվում են միասնական հաշվին՝ միասնական հաշվից մարվող պարտավորությունների մասով, վարչական ակտի միասնական հաշվին՝ այդ հաշվով մարվող պարտավորությունների մարման համար, իսկ միասնական հաշվից կամ վարչական ակտի միասնական հաշվից չմարվող այլ պարտավորությունների համար՝ համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին: Ըստ այդմ նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ. «2) 4-րդ մասում «միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը» բառերը փոխարինել «համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը, իսկ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			միասնական հաշվին կամ վարչական ակտի միասնական հաշվին վճարման մասով՝ այդ հաշիվներին համապատասխան գումարների մուտքագրման օրը» բառերով,»:		
4.	ՀՀ կառավարություն	**Հոդված 2 (լրամշակված նախագծի), հոդված 4 (լրամշակված նախագծի)**	Առաջարկվում է վարչական ակտի միասնական հաշվի սահմանմամբ համապատասխան փոփոխություններ կատարել նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի այն բոլոր հոդվածներում, որոնք վերաբերվում են միասնական հաշվին՝ նախատեսելով համանման կարգավորումներ կիրառել և միասնական հաշվի, և վարչական ակտի միասնական հաշվի համար: Ըստ այդմ նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ՝ 1) նոր 2-րդ հոդվածով՝ «Հոդված 2. Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 63-րդ կետի «է» ենթակետում, 51-րդ հոդվածի 7-րդ մասում, 322-րդ հոդվածի 2-րդ մասում «միասնական հաշվի» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվի» բառերը:», 2) նոր 4-րդ հոդվածով՝ «Հոդված 4. Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում, 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 108-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 109-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ, 112-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 147-րդ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հոդվածի 1-ին մասի 30-րդ կետերում «միասնական հաշվին» բառերից հետո լրացնել «կամ վարչական ակտի միասնական հաշվին» բառերը:», Նշված լրացվող հոդվածների հետ կապված վերանայվել է նախագծի հոդվածների համարակալումը:		
5.	ՀՀ կառավարություն	**Հոդված 13 (լրամշակված նախագծի հոդված 15) կետ 1**	Առաջարկվում է հստակեցնել տեխնիկական վրիպակը՝ հանելով կետում կրկնվող «մասին համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին» բառերը: Ըստ այդմ նախագծի 13-րդ հոդվածի **(լրամշակված նախագծի հոդված 15)** 1-ին կետով օրենսգրքի 95-րդ հոդվածում լրացվող 2-րդ մասում «4-րդ մասին համապատասխան մուտքագրվում է միասնական հաշվին կամ սույն հոդվածի 5-րդ մասին» բառերը փոխարինել «4-րդ կամ 5-րդ մասերին» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	**Հոդված 22 (լրամշակված նախագծի հոդված 24)**	Առաջարկվում է նախագծի 22-րդ հոդվածում՝ օրենսգրքի 327-րդ հոդվածի վերախմբագրվող տարբերակի 2-րդ մասում հստակեցնել հարկ վճարող բանկային հաշվի վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում միասնական հաշիվներում առկա գումարների վերադարձման համար այլ բանկային հաշվի վերաբերյալ տեղեկություն ներկայացնելու հետ կապված դրույթը: Ըստ այդմ **նախագծի 22-րդ**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հոդվածում (լրամշակված նախագծի հոդված 24) «իսկ դրա բացակայության դեպքում՝ հարկ վճարողի առաջարկած առևտրային բանկ՝ ֆիզիկական անձի անձնագրային տվյալներով» բառերը փոխարինվել են «իսկ Կառավարության սահմանած դեպքերում՝ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացված այլ հաշվին» բառերով:		
7.	ՀՀ կառավարություն	**Հոդված 24 (լրամշակված նախագծի հոդված 26)**	Առաջարկվում է օրենսգրքի 401-րդ հոդվածի 3-րդ մասում հստակեցնել խմբագրությունը: Ըստ այդմ նա**խագծի 22-րդ հոդվածում (լրամշակված նախագծի հոդված 24) «3-րդ մասը» բառերը փոխարինվել է «3-րդ մասից հանել «այն դեպքերում, երբ» բառերը և նույն մասը» բառերով:**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	**Հոդված 25 (լրամշակված նախագծի հոդված 27), հոդված 26 (լրամշակված նախագծի հոդված 28)**	Համատարած հայտարարագրման գործընթացի ներդրմամբ պայմանավորված և նախագծով նախատեսվող կարգավորումների մասով համապատասխան ծրագրային աշխատանքների իրականացումը սահմանված ժամկետում ապահովելու նպատակով առաջարկվում է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2024 թվականի հուլիսի 1-ը և նախագծի 26-րդ հոդվածում **(լրամշակված նախագծի հոդված 28)** «հունվար» բառը փոխարինել «հուլիս» բառով: Նշված ժամկետի փոփոխությամբ պայմանավորված համապատասխան	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փոփոխություններ են կատարվել նաև նախագծի 25-րդ հոդվածում **(լրամշակված նախագծի հոդված 27)**: **Ըստ այդմ նախագծի 25-րդ հոդվածում (լրամշակված նախագծի հոդված 27) «**հունվար» բառերը փոխարինվել են «հուլիս» բառերով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետում «2023 թվականի դեկտեմբերի 31-ի» բառերը՝ «2024 թվականի հունիսի 30-ի» բառերով:		
9.	ՀՀ կառավարություն	**Հոդված 26 (լրամշակված նախագծի հոդված 28)**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան առաջարկվում է նախագծի 26-րդ հոդվածում **(լրամշակված նախագծի հոդված 28)** «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ իրավական» բառերը: Միաժամանակ, լրամշակված նախագծում նոր հոդվածների լրացմամբ պայմանավորված համապատասխանեցնել նաև օրենքի համապատասխան հոդվածներին կատարվող հղումները: **Ըստ այդմ նախագծի 26-րդ հոդվածում (լրամշակված նախագծի հոդված 28)** 9 թիվը փոխարինվել է 11, 13-ը՝ 15, 17-ը՝ 19, 22-ը՝ 24, 23-ը՝ 25, 25-ը՝ 27 թվերով, և նույն հոդվածում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացվել են «նորմատիվ իրավական» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

10.	ՀՀ կառավարություն	Նախագծին կից ներկայացված է «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում հստակեցնելով, որ. 1) օրենքի կիրառման իմաստով միասնական հաշիվ է համարվում նաև վարչական ակտի միասնական հաշիվը, 2) սոցիալական վճարի պարտավորությունների հաշվառման նպատակով անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում հարկային մարմինը: Նախագծին կից ներկայացվում է «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: